Լուսաբանում

Ս/թ փետրվարի 14-ին Գյումրու տեխնոլոգիաների կենտրոնում տեղի ունեցավ «Կանաչ կլիմա» հիմնադրամի ներկայացուցչական հանդիպումը Շիրակի մարզում գործող պետական և ոչ պետական կառույցների հետ: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ ԿԳՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանը և ուսանողական խորհրդի նախագահ՝ Հովհաննես Սիմոնյանը:

Հանդիպման ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության, բնապահպանական ծրագրերի գրասենյակի ղեկավար Մերուժան Գալստյանը խոսեց կազմակերպությունների հավատարմագրման ընթացակարգի, պատրաստվածության աջակցություն ծրագրի, մասնավոր հատվածի ֆինանսավորման մեխանիզմների, կլիմայի մեղման և հարմարվողականության ծրագրերի վերաբերյալ: Ներկայացվեց նաև ծրագրերին դիմելու կարգի և ձևերի մասին:

Հանդիպումը նպատակ ուներ բացահայտելու համագործակցության հնարավորությունները:

ՍԵՄԻՆԱՐ-ԴԱՍԸՆԹԱՑ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

Լուսաբանում

ՀՀ ԿԳՆ թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանի ուղեկցությամբ թվով 19 ուսանող, ս/թ փետրվարի 20-ին մասնակցեցին Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպված «Մասնագիտական զարգացում» խորագիրը կրող սեմինար-դասընթացին: Դասընթացի թեմաներն էին.

- Ինչպե՞ս ընտրել մասնագիտություն
- Ի՞նչ եք ակնկալում մասնագիտությունից
- Հերձբերգի թեորեմ
- Խրախուսման և մոտիվացիայի ձևեր
- Ինչպե՞ս կառուցել կարիերա
- Համընդհանուր հմտություններ

Սեմինար-դասընթացը վարում էր ոլորտի փորձառու մասնագետ՝ Save the Children և Oxygen հիմնադրամների ծրագրերի ղեկավար, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի դասախոս՝ Արսեն Սիմոնյանը, ով սպառիչ պատասխաններ էր տալիս ուսանողների կողմից կատարված հարցադրումներին:

Դասընթացի ավարտին մասնակիցները լրացրեցին թեստեր, որի միջոցով բացահայտեցին իրենց մասնագիտական հմտությունների ուժեղ և թույլ կողմերը:

Լուսաբանում

2019 թվականի փետրվարի 5-ին ՀՀ ԿԳՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Խոհարարական գործ 1-ին կուրսի թվով յոթ ուսանող «Միասին» հիմնադրամում մասնակցեցին գործնական դասընթացի, որի ընթացքում պատրաստեցին ֆրանսիական քաղցրավենիքներ: Գործնական դասի նպատակն էր բացահայտել ուսանողների հմտությունները, որի արդյունքում երեք ուսանող կընդգրկվի հիմնադրամում երկարատև պրակտիկ դասընթացների:

Լուսաբանում

Ս/թ փետրվարի 15-ին ՀՀ ԿԳՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի խոհարարական գործ 1-ին կուրսի թվով յոթ ուսանող մասնակցեցին «Միասին» հիմնադրամում Սուրբ Սարգսի տոնին նվիրված միջոցառմանը, որտեղ նրանք իրենց անմիջական մասնակցությամբ պատրաստեցին օրվա խորհուրդ հանդիսացող աղի բլիթներ և քաղցրավենիքներ:

Ուսումնարանի և հիմնադրամի համատեղ համագործակցության շրջանակներում երեք ուսանող, ովքեր ընդգրկվել էին հիմնադրամում երկարատև գործնական դասընթացներին, մեկնարկեցին պարապմունքները:

Լուսաբանում

ՀՀ ԿԳՆ թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանի ուղեկցությամբ թվով վեց ուսանող, ս/թ մարտի 5-ին մասնակցեցին Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպված Flutter/ Dart ծրագրավորման լեզվի վարպետության դասին: Դասընթացը վարեց ոլորտի փորձառու մասնագետ՝ Դիջիթալ Փոմըգրանեթ ընկերության տեխնիկական գծով ղեկավար Գուրգեն Հովհաննիսյանը:

Փորձագետը ներկաներին ներկայացրեց iOS և Android հարթակների համար մոբայլ հավելվածներ ստեղծելու գործիքները և նրբությունները:

Դասընթացի ավարտին մասնակիցները լրացրեցին տեղեկատվական թերթիկ, որի միջոցով կապահովվի հետադարձ կապը և առաջիկա կազմակերպվող բաց դասերի մասնակցության հնարավորությունները:

Լուսաբանում

2019թ. մարտի 7-ին ՀՀ ԿԳՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Այբենարան» լսարանում Կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից անցկացվեց «Իրավագիտակից ուսանող՝ անվտանգ աշխատաշուկա» խորագիրը կրող դասընթացի առաջին հանդիպումը:

Դասընթացի ընթացքում ուսումնասիրվեցին հետևյալ թեմաները.

- Աշխատանքի ընդունվելու կարգը, պայմանները
- Որոշակի և անորոշ ժամկետով պայմանագրեր
- Աշխատողի իրավունքները և պարտականությունները
- Աշխատանքից ազատվելու կարգը
- Աշխատողների երաշխիքները:

Դասընթացների ընդհանուր նպատակն է.

Ուսանողներին զինել աշխատանքային իրավունքների գիտելիքներով, ձևավորել և զարգացնել հմտություններ գործատուի հետ առաջին անգամ հանդիպման ներկայանալու համար, ներկայացնել կրթություն-աշխատանքային շուկա կապի նրբությունները, բարձրացնել իրավագիտակցության մակարդակը աշխատող-գործատու փոխհարաբերությունների վերաբերյալ: Տրամադրել աշխատանքի ընդունվելու և ազատվելու վերաբերյալ գիտելիքներ:

Դասընթացը վարեց՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ, իրավապաշտպան-փաստաբան, դասախոս Գայանե Գևորգյանը, ով սպառիչ և գրագետ ներկայացրեց դասընթացի թեմաները և պատասխանեց բոլոր հարցադրումներին:

Սեմինար-դասընթացին մասնակցեցին թվով 38 ուսանողներ և 4 մանկավարժներ (12 տղա, 31 աղջիկ):

Կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար՝ Լևոն Իգիթյան

Լուսաբանում

2019թ. մարտի 12-ին «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից անցկացվեց «Աշխատանքի որոնման նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների ծանոթացում, կիրառում» թեմաներով դասընթացի առաջին հանդիպումը:

Դասընթացի ընդհանուր նպատակն է.

ուսանողներին փոխանցել այն հիմնական հմտությունները և գիտելիքները, որոնք նա անմիջապես գործի կդնի նոր աշխատանքային հնարավորություններ ձեռք բերելու ակնկալիքով:

Դասընթացը վարեց՝ կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանը, ով ուսանողներին ներկայացրեց աշխատանքի որոնման նորագույն մեթոդները, կիրառման ձևերը, ինչպես նաև սպառիչ և մատչելի պատասխանեց բոլոր հարցադրումներին:

Լուսաբանում

2019թ. մարտի 7-ին ՀՀ ԿԳՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Այբենարան» լսարանում Կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից անցկացվեց «Իրավագիտակից ուսանող՝ անվտանգ աշխատաշուկա» խորագիրը կրող դասընթացի առաջին հանդիպումը:

Դասընթացի ընթացքում ուսումնասիրվեցին հետևյալ թեմաները.

- Աշխատանքի ընդունվելու կարգը, պայմանները
- Որոշակի և անորոշ ժամկետով պայմանագրեր
- Աշխատողի իրավունքները և պարտականությունները
- Աշխատանքից ազատվելու կարգը
- Աշխատողների երաշխիքները:

Դասընթացների ընդհանուր նպատակն է.

Ուսանողներին զինել աշխատանքային իրավունքների գիտելիքներով, ձևավորել և զարգացնել հմտություններ գործատուի հետ առաջին անգամ հանդիպման ներկայանալու համար, ներկայացնել կրթություն-աշխատանքային շուկա կապի նրբությունները, բարձրացնել իրավագիտակցության մակարդակը աշխատող-գործատու փոխհարաբերությունների վերաբերյալ: Տրամադրել աշխատանքի ընդունվելու և ազատվելու վերաբերյալ գիտելիքներ:

Դասընթացը վարեց՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ, իրավապաշտպան-փաստաբան, դասախոս Գայանե Գևորգյանը, ով սպառիչ և գրագետ ներկայացրեց դասընթացի թեմաները և պատասխանեց բոլոր հարցադրումներին:

Սեմինար-դասընթացին մասնակցեցին թվով 38 ուսանողներ և 4 մանկավարժներ (12 տղա, 31 աղջիկ):

Կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար՝ Լևոն Իգիթյան

Լուսաբանում

Կարիերայի ուղղորդման կենտրոնի հրավերքով մարտի 14-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում տեղի ունեցավ Յունիսեֆի «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի վերաբերյալ տեղեկատվական հանդիպում:

Հանդիպման ընթացքում «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Նաջարյանը ուսանողներին ներկայացրեց ծրագրի նպատակը, իրականացման փուլերը, ծրագրային գաղափարների ներկայացման կարգն ու ձևաչափը: Ծրագիրը միտված է նպաստել երիտասարդների նախաձեռնողականության և քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ վերջիններիս ներգրավելով իրենց համայնքների կյանքի որակի բարելավմանն ուղղված գործընթացների մեջ:

Հանդիպման երկրորդ մասում վերոնշյալ ծրագրի ղեկավար Կարեն Տերտերյանն անցկացրեց «Ինտերնետային անվտանգություն» թեմայով սեմինար-դասընթաց: Քննարկվեցին «Տեղեկատվական դարաշրջանը» կամ «Թվային հասարակությունը», «Համացանցի (թվային միջավայրի) հնարավորություններ ու ռիսկեր», «Թվային գրագիտության հիմունքներ» թեմաները: Օրինակների վերլուծումների միջոցով մասնակիցներին հաղորդվեց բազային գիտելիքներ, տրամադրվեց նաև առցանց ռեսուրսներ՝ դասընթացից հետո լրացուցիչ ուսումնասիրման և ինքնակրթման նպատակով:

Կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար՝ Լևոն Իգիթյան

Լուսաբանում

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի և Հայկական Կարիտասի Էմիլի Արեգակ կենտրոնի կողմից Գյումրիում իրականացվող «Առաջին ներառական փուռ և սրճարան» ծրագրի համագործակցության շրջանակներում ս/թ մարտի 15-ին անցկացվեց դասընթաց:

Դասընթացավար հոգեբան Կարինե Միրզոյանը ուսանողներին ներկայացրեց «Հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ հասարակության վերաբերմունքը տարբեր պատմական դարաշրջաններում», «Ներառական կրթության կարևորությունը՝ հեռանկար, դժվարություն», «Հաղորդակցման հմտություններ» թեմաները, որոնց շուրջ ծավալվեց բուռն քննարկում.

Դասընթացին մասնակցեց 23 ուսանող: Համագործակցության շրջանակում դասընթացները կլինեն շարունակական:

Հաջորդ հանդիպումը կկայանա մարտի 28-ին:

Կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար՝ Լևոն Իգիթյան

Լուսաբանում

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանը, ուսումնարանի ուսանող Հակոբ Մովսիսյանի հետ ս/թ մարտի 19-ին, մասնակցեցին «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար» ծրագրի շրջանակներում կազմակերպված աշխատանքային հանդիպմանը:

Հանդիպմանը ներկա էին ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիսերը, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA ROLI) տնօրեն Հասմիկ Հակոբյանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետազոտական և կրթական կենտրոնի ղեկավար Լուսինե Սարգսյանը:

Քննարկման թեմաներն էին՝ Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ապահովում ՀՀ մարզերում, խտրականության բացառումը և կանանց իրավունքների

պաշտպանությունը Շիրակի մարզում (աշխատանքային իրավունք, աշխատանքային իրավունքների խախտումների կանխարգելում, առողջության պահպանման իրավունք, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում, կանանց մասնակցությունը քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում, օրենսդրական առաջարկներ, և այլն):

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Լուսաբանում

Ս/թ մարտի 20-22-ը Գյումրի, Ախուրյան և Մարմաշեն համայնքների միջնակարգ և հիմնական դպրոցներում իրականացվեց իրազեկման հանդիպումներ:

Հանդիպումների ընթացքում «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանն ուսումնական հաստատությունների մանկավարժական հանրույթին և 9-րդ դասարանի աշակերտներին ներկայացրեց մարտի 29-ին տեղի ունենալիք «Բաց դռների օր» միջոցառման վերաբերյալ:

Ներկայացվեց միջոցառման նպատակը, օրակարգ , ինչպես նաև ուսումնարանում գործող բաժինները:

Լուսաբանում

Կարիերայի ուղղորդման կենտրոնում մարտի 22-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի թվով 15 ուսանող մասնակցեցին կլոր սեղան քննարկման, որտեղ քննարկվում էր ծրագրային գաղափարներ «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրին մասնակցելու համար:

Լուսաբանում

Ս/թ մարտի 26-ին Կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանի ուղեկցությամբ ուսումնարանի թվով 16 ուսանող մասնակցեցին Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպված « Ինչպես զարգացնել ռազմավարական մտածողություն զարգացող երկիրների ՏՏ-ների օրինակներով» թեմայով աշխատանքային հանդիպմանը:
Թայվանից ժամանած հյուրերը ներկաների հետ զրուցեցին հետևյալ թեմաների շուրջ.

ՏՀՏ ոլորտի զարգացման ռազմավարություններ զարգացող երկրների համար

Exponential աճ. Արդյունաբերության առաջընթացը կարող է վախեցնել, սակայն լիարժեք հնարավորություններով

Զարգացող երկրների համար արդյունաբերական զարգացման համար չորս ռազմավարություն

Արդյունաբերության կլաստերային էվոլյուցիան

Արդյունաբերական զարգացման հայեցակարգը

Արդյունաբերական ինտեգրման նոր մոդել

Ինչպես կարող ենք միասին աշխատել

Ազգային ռազմավարություններ

Երեք ինտերնետ հսկաները և դրանց տվյալների կենտրոնները

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Լուսաբանում

Մարտի 29-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց Բաց դռների օր: Միջոցառմանը մասնակցեցին Գյումրու հանրակրթական դպրոցների շուրջ 150 աշակերտ:

Միջոցառման նպատակն էր օգնել երիտասարդներին մասնագիտական ճիշտ կողմնորոշման հարցում, ծանոթացնել ուսումնարանի գործունեությանը, ծրագրերին, գործող մասնագիտություններին, ձեռքբերումներին և գործընկեր կազմակերպությունների համագործակցության շնորհիվ ընձեռված հնարավորություններին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ուսումնարանի տնօրեն Քնարիկ Ահարոնյանը: Ուսումնարանի գործունեության վերաբերյալ մանրամասներ ներկայացրեց տնօրենի տեղակալ Անուշ Մկրտչյանը, իսկ «Կարիերայի ուղղորդման կենտրոն»-ի ղեկավար Լևոն Իգիթյանը՝ կարեիայի կենտրոնի գործառույթները, նպատակը և իրականացված աշխատանքները: Միջոցառմանը ներկա էին Շիրակի մարզպետարանի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության, Գյումրու Տարածքային զբաղվածության կենտրոնի, «Էմիլի Արեգակ» և այլ գործընկեր կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ: ՏԶԿ-ի տնօրենի տեղակալ Սվետլանա Ալեքսանյանը ներկայացրեց կենտրոնի կողմից իրականացվող պետական ծրագրերի, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների և թափուր հաստիքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն: Լենտեքս» ՍՊԸ-ի արտադրության պետ և անվտանգության ինժեներ Սուսաննա Աստոյանը, «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի, ինժեներ Հովհաննես Ավդալյանը, և «Նոր Ալեպպո» ռեստորանի տնօրեն Շանթ Գահվեջյանը անդրադարձան հաջողված համագործակցությանը, շեշտելով համապատասխան արտադրամասերում «Ռադիոէլեկտրոնային միջոցների սպասարկում և նորոգում», «Խոհարարական գործ» մասնագիտական բաժինների ուսանողների գործնական պարապմունքների կազմակերպման արդյունավետությունը՝ աշխատաշուկայում մրցունակ կադրեր պատրաստելու գործընթացում:

Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Սամվել Մարտիրոսյանը քաջատեղյակ լինելով ուսումնարանի գործունեությանը, գոհունակությամբ կարևորեց արհեստագործական կրթության դերը մարզի զարգացման գործընթացում: Միջոցառման ավարտին ուսխորհրդի անդամների ուղեկցությամբ մասնակիցները շրջայց կատարեցին ուսումնարանի արհեստանոցներ, որտեղ ուսանողները ցուցադրեցին ձեռք բերած մասնագիտական կարողությունները, իսկ ապագա դիմորդներին տրվեց անհատական խորհրդատվություն:

Կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյան

Նկարադարան

Լուսաբանում

2019թ. ապրիլի 4-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհուրդը կարիերայի ուղղորդման կենտրոնի հետ համատեղ կազմակերպել էր մոմավառություն՝ ի հուշ Ապրիլյան քառօրյա պատերազմում մարտիրոսված հերոս տղաների: Սուրբ Յոթ Վերք եկեղեցում ուսանողներն աղոթք բարձրացրին առ Աստված. նրանք լցված էին հայրենասիրական ոգով, դեմքերին ցավ էր նշմարվում...

Լուսաբանում

Ապրիլի 4-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողները /թվով 20/ Գյումրու դրամատիկական թատրոնի Մ.Մկրտչյան փոքր դահլիճում մասնակցեցին «ԼոգոՍ» Իրավապաշտպան ՀԿ-ի կողմից կազմակերպված՝ «Ես ունեմ երազանք» իրազեկման շրջիկ թատրոնի առաջին ներկայացմանը: Ծրագրի նպատակն է՝ աջակցել կանանց շրջանում իրավունքների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացմանը և խթանել որոշումների կայացման գործընթացին վերջիններիս մասնակցությունը: Բեմադրված էր հինգ սյուժե՝ կնոջ խոսքի ազատության, ընտրական իրավունքի, աշխատանքի շահագործման և բռնության մասին: Հանդիսատեսը հնարավորություն ուներ ակտիվ մասնակցություն ունենալ ներկայացմանը՝ փոփոխել սյուժեն՝ ըստ իր ցանկության, անմիջական դերախաղով թելադրել իր տարբերակը: Մեր ուսանողները, ունենալով իրավական բազային գիտելիքներ, ակտիվ մասնակցություն ունեցան և իրենց տարբերակներն առաջարկեցին դերասաններին: Նրանք ոգևորված էին և տպավորված:

Լուսաբանում

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կարիերայի ուղղորդման կենտրոնը, «Մասնագիտական կողմնորոշում» ծրագրի շրջանակներում համագործակցելով «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի հետ, ս/թ ապրիլի 9-ին կազմակերպեց շրջայց Շիրակի մարզի Սառնաղբյուր, Լանջիկ, Գուսանագյուղ, Հոռոմ, Բենիամին, Վարդաքար, Մեղրաշեն համայնքների միջին և ավագ դպրոցի աշակերտների համար: Շրջայցի ընթացքում ուսումնարանում դասավանդող վարպետները ուսանողների անմիջական մասնակցությամբ ներկայացրին ուսումնարանում գործող մասնագիտությունները և ցուցադրեցին իրենց աշխատանքները:

Շրջայցի ավարտին կազմակերպվեց նաև դասընթաց, որի նպատակն էր ծանոթացնել ուսումնարանի գործունեությանը, ծրագրերին, մասնագիտություններին, ձեռքբերումներին, ինչպես նաև բացահայտել աշակերտների կարողություններն ու հմտությունները, տալ ինքնաճանաչման և ինքնադրսևորման հնարավորություն, խորհրդատվության միջոցով օգնել աշակերտներին կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում՝ ըստ իրենց կարողությունների, հետաքրքրությունների ու նախասիրությունների: Իսկ ուսումնարանի ուսմասվար Ս. Էլբակյանը ներկայացրեց ուսումնարան դիմելու կարգը և ժամկետը:

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը ս/թ ապրիլի 22-ին կազմակերպել էր «Աշխատանքի նկատմամբ անձի մոտիվացիայի ձևավորում» խորագրով սեմինար-դասընթաց:

Սեմինար-դասընթացի ընդհանուր նպատակն է.

Նպաստել ուսանողների մոտիվացիայի էության, տեսությունների, կարիերայի ուղու վերաբերյալ գիտական գիտելիքների հաղորդման ու արդյունավետ աշխատանքի նկատմամբ դրական մոտիվացիայի ձևավորմանը:

Դասընթացի թեմաներն էին.

- **Մոտիվացիայի էությունը**
- **Մասլոուն և մարդկային կարիքների հիերարխիան**
- **Հերցբերգը և երկգործոն տեսությունը**

Դասընթացը վարեց Սթեյշն տուր և Սթեյշն հյուրատան հիմնադիր տնօրեն Նաիրա Գրիգորյանը, ով բացի հիմնական թեմայից ուսանողների հետ կիսվեց իր սեփական փորձով թե ինչպես է կարողացել հիմնել սեփական բիզնեսը մոտիվացման շնորհիվ:

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողները կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանի ուղեկցությամբ 2019թ. ապրիլի 25-ին մասնակցեցին Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն գիտակրթական հիմնադրամի կազմակերպած «Բաց դռների շաբաթ» միջոցառմանը:

«Բաց դռների շաբաթ» միջոցառման ընթացքում մասնակիցները շրջայց կատարեցին կենտրոնում, ծանոթացան կենտրոնի պատմությանը, գործունեությանը, իրականացվող ծրագրերի մանրամասներին ու առանձնահատկություններին, ընդունելության և ուսման պայմաններին:

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը ներկայացնող **«3+2»** ուսանողական թիմը մայիսի 5-ին մասնակցեց «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրին: Ուսանողները «BootCamp» համայնքային երիտասարդական ծրագրերի ներկայացման երկօրյա հանդիպմանը հանդես եկան «Էկոլոգիապես մաքուր տոպրակներ» ծրագրային գաղափարով, որը ժյուրիի կողմից արժանացավ բարձր գնահատանքի և ներառվեց այն ծրագրերի շարքում, որոնք կֆինանսավորվեն «UPSHIFT Հայաստան»-ի շրջանակներում:

Շնորհավորում ենք ուսանողներին և մաղթում նոր ձեռքբերումներ:

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանի ուղեկցությամբ թվով 7 ուսանող մայիսի 15-ին Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում մասնակցեցին «Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված տեղեկատվական հանդիպմանը:

Հանդիպման նպատակն էր մարդուն՝ անհատական կարիքներին համահունչ ինքնակրթվելու, սովորելու, զարգանալու հնարավորություն ընձեռելը:

Հանդիպման ընթացքում «Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչները տեղեկացրեցին, որ կայքում արդեն առկա է հայերեն 2000 տեսանյութ, 900 վարժություն և ուսուցողական նյութ, նախատեսում է հայերեն դարձնել նոր հետաքրքիր բաժիններ: Ներկայացրեցին, թե ինչպես կարող են տեսանյութերի ու վարժությունների միջոցով սովորել մաթեմատիկա, քիմիա, ծրագրավորում, արվեստ, երաժշտություն և շատ այլ հետաքրքիր բաներ, խոսեցին նաև հայալեզու առցանց կրթական ռեսուրսների, սովորողների մոտիվացիայի մասին:

«Զարդակիրառական նշանակության թանկարժեք իրերի պատրաստում՝ ոսկերիչ»

«Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ»



«Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգիչների»



«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար»

MY
LIFE